«ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆԻ ԿԱՐՃ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Սերոբյան Ա.Կ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
astghiks@ysu.am
Ներկայացման ամս.՝ 31.07.2019
գրախոսման ամս.՝ 08.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոգեբանական հետազոտություններում հաճախ անհրաժեշտություն է առաջանում կիրառել անձնային հարցարանների կարճ տարբերակները: Հոդվածի նպատակն է ներկայացնել «Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանի կարճ տարբերակի մշակման, հուսալիության և վալիդության ստուգման գործընթացը: Հետազոտությանը մասնակցել են ընդհանուրը 323 հոգի, ինչպես տարբեր բուհերի ուսանողներ, այնպես էլ ոչ ուսանողներ (84.2% կին, $M_{տարիք}$=22.6, $StDev_{տարիք}$=5.726): Հետազոտության ընթացքում ստուգվել է հարցարանի ներքին հուսալիությունը, թեստ-ռեթեստային հուսալիությունը: Ինչպես նաև չափվել են կոնստրուկտային վալիդությունը գործոնային վերլուծության միջոցով: Արդյունքում որոշ հարցեր կրճատվել են և նախնական 40 հարցից մնացել է 30-ը:

Հանգուցային բառեր: *Անձնային գծեր, Մեծ հնգյակ, հարցարանի մշակում, ներքին հուսալիության ստուգում, թեստ-ռեթեստային հուսալիության ստուգում, կոնստրուկտային վալիդություն, բովանդակային վալիդություն:*

«Մեծ հնգյակի» տեսության համաձայն անհատական առանձնահատկությունները մեկնաբանվում են անձնային գծերով, որոնք ապահովում են վարքի միջհրավիճակային կայունությունը (cross-situational consistency) [4]: Հիմնվելով հոգելեզվաբանական [3] մոտեցման և գործոնային վերլուծության մեթոդի վրա՝ հետազոտողները եզրակացնում են, որ անձը կարելի է նկարագրել հինգ հիմնական գծերի միջոցով: Այդ հինգ գծերից յուրաքանչյուրը ներկայացնում է անձի մեկ կարևորագույն կողմ, որը դրսևորվում է նրա գործունեության մեջ և մարդկանց հետ շփման ընթացքում [3]: Այս գծերը կայուն են ժամանակի մեջ, անկախ են իրավիճակից և դրանց միջոցով հնարավոր է համակողմանի նկարագրել մարդուն [5]: Հինգ գործոնային մոդելը դիտարկվում է որպես անհատի հուզական, կոգնիտիվ, դրդապատճառային բազային ոճերի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների կառուցման անհատական ոճերի ուսումնասիրման գործիք: Այդ հինգ գործոններն են՝ *Նեյրոտիզմ, Էքստրավերտություն, Լայնախոհություն, Բարյացակամություն, Բարեխղճություն:* Գործոններից յուրաքանչյուրն իր հերթին ընդգրկում է վեց ենթագործոն [6]:

«Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի աշխատանքների արդյունքում ստեղծվել է «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանը [1], որը բացի հինգ հիմնական գծերից, չափում է նաև յուրաքանչյուր գծի համար վեց

տարբեր ենթագործոններ ու բաղկացած է 150 պնդումից: Սակայն հաճախ հետազոտությունների նպատակից, ժամանակի սղությունից կամ այլ հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում օգտագործել հարցարանների ավելի կրճատ, սեղմ տարբերակները: Հոդվածում ներկայացված են «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի մշակման փուլերը: Հարցարանի այս տարբերակը չափում է միայն հինգ հիմնական գործոնները:

Հոդվածում ներկայացված հետազոտության **նպատակն** է ներկայացնել «Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանի կարճ տարբերակի մշակման, հուսալիության և վալիդության ստուգման գործընթացը:

Հետազոտությանը մասնակցել են ընդհանուրը 323 հոգի, ինչպես տարբեր բուհերի ուսանողներ, այնպես էլ ոչ ուսանողներ: Մասնակիցների 15.8%-ը տղամարդ է, իսկ 84.2%-ը՝ կին ($M_{տարիք}$=22.6, $StDev_{տարիք}$=5.726): Ընտրանքի մի մասը, այն է 68 հոգի մասնակցել է նաև թեստ-ռեթեստային հետազոտությունը: Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակը: «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակը բաղկացած է 40 պնդումից, յուրաքանչյուր գործոնի համար 8 պնդում, որոնք ներառում են տվյալ մեծ գործոնը կազմող ենթագործոններից պնդումներ: Պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրա հետ: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ մեկ թիվը նշանակում է, որ ընդհանրապես համաձայն չէ, իսկ հինգը՝ միանշանակ համաձայն է: Հարցարանի հիմնական սանդղակներն են Նեյրոտիզմ, Էքստրավերտություն, Լայնախոհություն, Բարյացակամություն, Բարեխղճություն:

Արդյունքները հետագայում ենթարկվել են վերլուծության՝ օգտագործելով մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Վերլուծության նախնական փուլում ստուգվել է ստացված հինգ մեծ գործոններից յուրաքանչյուրի բաշխվածությունը համապատասխանում է նորմալ բաշխմանը, թե ոչ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Մեծ հնգյակը չափող հարցարանի գործոնների նորմալ բաշխվածության չափանիշները, Կրոնբախի ալֆան և թեստ-ռեթեստային գործակիցը

	Ն[1]	Է	Լ	ԲԿ	ԲԽ
Միջին արժեք (M)	3.10	3.35	3.69	3.14	3.39
Ստանդարտ շեղում (St.Dev)	0.629	0.558	0.509	0.469	0.528
Կոլմոգորով-Սմիրնով Z	0.910	1.121	1.512	1.338	1.290
Նշ. գործակից Կ-Ս Z համար	0.379	0.162	0.061	0.056	0.072
Կրոնբախի ալֆա (α)	0.715	0.632	0.595	0.405	0.668
Թեստ-ռեթեստային գործակից	0.765	0.704	0.760	0.754	0.799

Աղյուսակ 1-ում ներկայացված են գործոնների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները, ինչպես նաև Կոլմոգորով-Սմիրնովի Z չափանիշն ու դրա

նշանակալիության աստիճանը: Բաշխվածությունը համարվում է նորմալ, երբ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի նշանակալիության աստիճանը մեծ է 0,05-ից [2]: Այսինքն, ելնելով աղյուսակի տվյալներից, կարելի է ասել, որ բոլոր հինգ գործոնները բաշխվել են նորմալ: Սա թույլ է տալիս, որպեսզի հետազոտության արդյունքները ենթարկվեն հետագա վիճակագրական վերլուծության:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ որ նույնն է ներքին հուսալիությունը ստուգելու համար օգտվել ենք Կրոնբախի ալֆայի ցուցանիշից: Այն ցույց է տալիս, թե յուրաքանչյուր պնդում որքանով է համապատասխանում այն սանդղակին, որը չափում է: Իսկ հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի էությունն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել են երկու անգամ երկու ամիս ընդմիջմամբ, այսինքն՝ կատարվել է կրկնակի թեստավորում [2]: Հետազոտությանը մասնակցել է 68 ուսանող ($M_{տարիք}$ =19.1, $SD_{տարիք}$=0.790, կանայք 98%):

Կրոնբախի ալֆայի և թեստ-ռեթեստային գործակցի արդյունքները Մեծ հնգյակի յուրաքանչյուր գործոնի համար ներկայացված են Աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված տվյալներից Կրոնբախի ալֆան հինգ գործոններից ոչ բոլորի համար է ստացվել 0,6-0,7-ից մեծ թիվ, մասնավորապես Բարյացակամություն սանդղակի համար ալֆան 0,405 է, ինչը այդքան էլ հուսալի ցուցանիշ չէ [2]: Հասկանալու համար, թե որ պնդումն է իջեցնում վերոնշյալ սանդղակի հուսալիության աստիճանը, Կրոնբախի ալֆան հաշվվել է մի քանի անգամ՝ ամեն անգամ հանելով պնդումներից մեկը: Արդյունքում «Չեմ սիրում խոսել իմ մասին» պնդումը, եթե սանդղակի հաշվարկի մեջ չենք դիտարկում, Բարյացակամություն սանդղակի ալֆան էականորեն աճում է՝ դառնալով 0,6-ին մոտ թիվ:

Ինչ վերաբերում է թեստ-ռեթեստային կոռելյացիոն գործակցին, ապա այս դեպքում արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0,75-0,8 է և ավելի [2]: Մեծ հնգյակի հինգ գործոնները, այն է՝ Նեյրոտիզմը, Էքստրավերտությունը, Լայնախոհությունը, Բարյացակամությունը և Բարեխղճությունը համապատասխանում են այդ չափանիշին, այսինքն հարցարանը կարող ենք համարել կայուն:

Այսպիսով Մեծ հնգյակը չափող հարցարանի կարճ տարբերակը կարող ենք համարել հուսալի և կայուն, սակայն որոշակի վերապահումներով, այսինքն կան պնդումներ, որոնք կարելի է հանել հարցարանի հուսալիությունը բարձրացնելու համար:

«Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի համար չափվել են բովանդակային և կոնստրուկտային վալիդություն: Բովանդակային վալիդությունը հաստատվում է այն փաստով, որ IPIP-ի (անգլ.՝ International Personality Item Pool) էլեկտրոնային կայքում տեղակայված պնդումների բազայից[17] փորձագիտական հարցման արդյունքում ընտրվել են նրանք, որոնք ընկալելի

[17] http://ipip.ori.org/newNEOFacetsKey.htm

կլինեն հայալեզու ընտրանքի համար: IPIP-ը անձնային գծերին վերաբերող պնդումների անվճար բազա է, որից կարող են օգտվել բոլոր հետաքրքրված հետազոտողները: Կայքում յուրաքանչյուր անձնային գիծը չափվում է մի քանի պնդումներով: Վերջիններս էլ կազմվել են անձնային գծերը չափող հուսալի և վալիդ հարցարանների կետերի հիման վրա: Հետազոտողները կայքի բազան կարող են օգտագործել նոր հարցարաններ կազմելու համար: Հարցարանի կոնստրուկտային վալիդությունը ստուգվել է՝ օգտագործելով հաստատող գործոնային վերլուծության մեթոդը [2] (անգլ.՝ confirmatory factor analysis): Գործոնային վերլուծության համար որպես տարանջատման մեթոդ (անգլ.՝ Extraction method) ընտրվել է հնարավոր նմանության մեթոդը (անգլ.՝ Maximum likelihood), իսկ որպես պտույտի մեթոդ՝ վարիմաքսը (անգլ.՝ Rotation method Varimax): Կոնֆիրմատոր գործոնային վերլուծության շնորհիվ «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի 40 պնդումներից միայն 30 կազմեցին գործոնային կառուցվածք, մնացած 10-ը դուրս մնացին ստացված կառուցվածքից, այսինքն՝ կրճատվեցին: Ստացված գործոնային կառուցվածքը բացատրում է տվյալների դիսպերսիայի 44.7%-ը: Ստացված գործոնային կշիռները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Մեծ հնգյակը չափող հարցարանի սանդղակների գործոնային կառուցվածքը

	Ն³	ԲԽ	Է	ԲԿ	Լ
Հաճախ կորցնում եմ համբերությունս	.752				
Շուտ եմ հուզվում և նյարդայնանում	.678				
Հազվադեպ եմ բարկանում	-.607				
Հանգիստ եմ նույնիսկ լարված իրավիճակներում	-.604				
Հեշտությամբ եմ խուճապի մատնվում	.593				
Անսովոր իրավիճակներում շփոթվում եմ	.504				
Միշտ փորձում եմ ավարտին հասցնել սկսած գործը		.590			
Սիրում եմ կարգուկանոն		.567			
Խոսքից անմիջապես անցնում եմ գործի		.557			
Ամբողջությամբ տարվում եմ նպատակներիս իրականացմամբ		.504			
Հաճախ չեմ պահում խոստումներս		-.426			
Կարողանում եմ լավ լուծումներ գտնել		.338			
Սիրում եմ հանգիստ կենսակերպ			-.514		
Արագ եմ ստեղծում մտերիմ հարաբերություններ			.458		
Ինձ հեռու եմ պահում մարդկանցից			-.404		
Հիմնականում նախաձեռնությունը վերցնում եմ իմ ձեռքը			.379		
Սիրում եմ սուր զգացողություններ			.367		
Հաճախ եմ մուսներին ուղղություն զույց տալիս			.303		
Հիմնականում վստահում եմ մարդկանց				.834	
Հավատում եմ մարդկանց խոսքերին				.696	
Կարծում եմ, որ մարդիկ իրենց բնույթով չար են				-.381	
Դժվարությամբ եմ ներում				-.317	
Չեմ սիրում խոսել իմ մասին				-.244	
Կարող եմ ձայնս բարձրացնել ուրիշների վրա				-.106	
Երևակայությանս ազատություն չեմ տալիս					.563
Սիրում եմ ուսումնասիրել ինձ և իմ կյանքը					-.449
Չեմ սիրում փոփոխություններ					.408
Խուսափում եմ բարդ բաներ կարդալ					.401
Տրվում եմ իմ ֆանտազիաներին					-.395
Սիրում եմ այցելել արտասովոր վայրեր					-.317

Այսպիսով գործոնային վերլուծության արդյունքում նախնական 40 պնդումները կրճատվեցին՝ դառնալով 30, որի հետևանքով յուրաքանչյուր մեծ գործոնը 8 հարցի փոխարեն այժմ չափվում է 6 հարցով: Բայց միևնույն ժամանակ գործոնային վերլուծության արդյունքում հաստատվեց «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակի կոնստրուկտային վալիդությունը:

Հետազոտության արդյունքում ստացանք հայերենով մշակված հուսալի և վալիդ անձնային հարցարան, որի կիրառության ոլորտները բազմազան են: «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի կարճ տարբերակը կարելի է կիրառել տարբեր ոլորտներում. մարդկային ռեսուրսների գործունեության մեջ՝ աշխատակազմի նախնական ընտրության համար, մասնագիտական կողմնորոշման մեջ՝ մարդու անհատական առանձնահատկություններին համապատասխան աշխատանք/գործունեություն գտնելու համար, և այլն:

Գրականություն

1. **Սերոբյան Ա.Կ.** «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանի հուսալիության ստուգումը: Արդի հոգեբանություն, 2018, 2, էջ 117-125.
2. **Митина О.В.** Разработка и адаптация психологических опросников.- М.: Смысл, 2011:
3. **Goldberg, L.R.,** 1992. The development of markers for the Big-Five factor structure. Psychological assessment, 4(1), p.26-42.
4. **Lee, K. and Ashton, M.C.,** 2008. The HEXACO personality factors in the indigenous personality lexicons of English and 11 other languages. Journal of personality, 76(5), pp.1001-1054.
5. **McAdams D. P., Pals J. L.** A new Big Five: Fundamental principles for an integrative science of personality. American psychologist, 61 (3), 2006, pp. 204-217:
6. **McCrae R., Costa P. Jr**. A five factor theory of personality. In O. John, L. Pervin (Eds.), Handbook of personality: Theory and research, 2nd ed. New York, NY: Guilford Press, 1999, pp. 139-153:

СОЗДАНИЕ КОРОТКОЙ ВЕРСИИ АРМЯНОЯЗЫЧНОГО ЛИЧНОСТНОГО ОПРОСНИКА “БОЛЬШАЯ ПЯТЕРКА”

Серобян А. К. (ЕГУ, Ереван, Армения)

Во многих психологических исследованиях бывает необходимо использовать короткие версии личностных опросников. Целью статьи является представление результатов анализа надежности и достоверности короткой версии армянского опросника «Большой пятерки», которая измеряет только пять основных факторов. В исследовании были использованы данные 323 студентов и не студентов (84,2% женщин, Mв = 22,6, StDevв = 5,726). Результаты показывают, что коэффициент

Кронбаха альфа и тест-ретестирования для всех пяти шкал были получены достаточно высокими, чтобы вопросник считался надежним. Кроме того, был проведен подтверждающий факторный анализ для выявления конструктивной обоснованности опросника. После проведенных психометрических процедур из 40 вопросов осталось только 30.

Ключевые слова: *личностные качества, большая пятерка, разработка опросника, анализ надежности, анализ тест-ретест, конструктивная валидность, содержательная валидность.*

DEVELOPMENT OF THE ARMENIAN "BIG FIVE" QUESTIONNAIRE SHORT VERSION

Serobyan A. K. (YSU, Yerevan, Armenia)

In many psychological researches we need to use short versions of the personality traits questionnaires. The aim of the article is to present reliability and validity analysis of the short version of the Armenian Big Five Questionnaire, which measures only five main factors. Data from 323 students and non-students was used in the study (84.2% female, Mage=22.6, StDevage=5.726) The results show that the Cronbach's alpha and test-retest coefficient for all the five scales has been obtained high enough that the questionnaire will be considered reliable. Besides a confirmatory factor analysis was conducted to reveal construct validity of the questionnaire. After describing psychometric procedures 30 of 40 preliminarily items left.

Key words: *Personal traits, Big Five, questionnaire development, reliability analysis, test-retest analysis, construct validity, content validity.*